Պերտինաքոս սկսաւ յամի Տեառն ՃՂԳ. ինքնակալեաց ամիս Գ: Էր սա արդարադատ. մեռաւ ծերացեալ՝ բայց սպանմամբ, զի ամբոխ քաղաքին կուտեալ 'ի վերայ նորա՝ սպանին զնա:

Սեւերոս սկսաւ յամի Տեառն ՃՂԳ. ինքնակալեաց ամս ԺԸ: Եւ էր Ափրիկեցի և գիտուն յոյժ: Սա էր յառաջնմէ ճարտասան դատաստանաց. և մի զմիոյ զկնի փոխեալ գործավարութեամբ եւ յինքնակալութիւն. և էր պատերազմող: Սա յարոյց զչորրորդ հալածումն 'ի վերայ քրիստոնէից, և մեռաւ մինչ 'ի պատերազմին Անկարիոյ էր:

Անտոնինոս երկրորդ՝ սկսաւ յամի Տեառն ՄԺԳ. ինքնակալեաց ամս Է. բղջախոհ և չար յոյժ: Ի ժամանակս սորա գտեալ եղեւ յՆորիքով Ն. գիրք, որ ոչ երեւէր՝ թէ ո՞ւմ էր յարմարեալ. սակայն զանազան և պիտանի խոհեմ բանք

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան